

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Ի Տ Ա Ր Ի

ՄԵՆԿ

Ստորագրողները բաց է առաւօտեան 10—2 ժամ
կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւնները ընդունուում են ամէն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Տարեկան գինը 5 րուբլ, կէս տարեկանը 3 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Կատարեանի և Արախանեանի խանութում:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Աւետարանի թարգմանութիւնը.— Եւրոպայի տեսուչները Վրաստանի ազգային պատանած ղեկավարութեան առիթով, Նամակ խմբագրին: Նամակ կարից: Նամակ Գանձակից: Ներքին լուրեր:— Արտաքին տեսուչները: Սերբիա: Փոլոնիա: Ֆրանսիա: Սպանիա: Բելգիա: Նամակ Կ. Պոլսից: Նամակ Գերմանիայից:— Սառն լուրեր:— Յայտարարութիւններ:— Բանասիրական: Հին և նոր լեզու:

Նորին Բարձրութիւն Հերցոգ Գեորգ Մեկ-Լեւոնի-ՍՏՐԵԼԻՑ յունիսի 8-ին, ժամը 5 1/2 վախճանվեցաւ Կամեննո-Օստրովկի պալատում:

Ս. ԱՆԵՏԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը կը կարգայ «Մշակ» ներկայ համարի ներքին լուրերում, որ վաղցին թարգմանեցին և տպագրեցին իրանց աշխարհաբար լեզուով աւետարանը, այն ինչ մենք, հայերս, պարճենալով թէ ունենք մի ազատ և ժողովուրդական եկեղեցի, ամենամեծ արդիւնքներ ենք պատահում որ իրաւունք ստանանք քրիստոսի խօսքը մեր մայրենի, խօսեցած, կենդանի լեզուով տպագրելու և կարդալու....

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ի Ն Ե Ւ Ն ՈՐ Լ Ե Ջ ՈՒ

Ամեն երկրում, ամեն հասարակութեան մէջ, աշխարհի որ կողմն էլ գնաց իսկոյն կը պատահէք տեղական, սեփական լեզուին: Ամեն երկրում, ամեն ժողովրդի մէջ, երկրագնդի որ ծայրին էլ հասնէք իսկոյն կը լսէք այդտեղի յատուկ լեզուի հնչիւնը:

Յրանսիական ժողովուրդը՝ ֆրանսերէն լեզուով է խօսում, գերմանական ազգը՝ գերմաներէն լեզուով է խօսում, իտալականը՝ իտալերէն, և այլն: Իւրաքանչիւր ժողովուրդ, իւրաքանչիւր ազգ ունի իր սեփական, յատուկ լեզուն:

Մի լեզու առանց ժողովրդի, մի լեզու առանց ազգութեան, առանց երկրի անկարելի է, բնութեան մէջ անհնարելի մի բան է: Իւրաքանչիւր ազգութիւն իր լեզուի տէրն է, իր լեզուի հեղինակն է: Դա է զարգացում իր լեզուն, դա է հարուստ լեզուի նոր կանոններ, բառեր, խօսքեր, իր մտքի, ուղեղի զարգացման համեմատ զարձակումներ, ձևեր: Մի խօսքով դա է ստեղծում, դա է կենսւք տալիս այն բանին, որ բնական հետեանք է մարդուս ֆիզիոլոգիական կազմուածքի:

Այժման լեզուաբանական գիտութիւնը (linguistique) հիմնուած է ֆիզիոլոգիայի վրա, բնական (և ոչ թէ վերացական) գիտութեան մեթոդներով են որոյնում լեզուի կազմակերպութեան, զարգացման, փոփոխութեան օրէնքները: Որ լեզու էլ վերցնէք իր բնական զարգացման նման է ուրիշ լեզուի: Ինչպէս և ամեն մարդու մարմնի կազմութիւնը նման է միւս մարդկանց կազմութեանը:

Շատ երկրներում երկու տեսակ լեզու կան՝ հին և նոր:

Հին լեզուն, հին ժողովրդի, զարբերով մեզանից առաջ ապրող ազգութեան, հին քաղաքակրթութեան ծնունդ է: Դա ծառայում էր իր ժամանակին իր տիրութիւն: Գործում էր այն ժամանակ գրում էին, գրանոյթ լուսում էին, գրանոյթ խօսակցութեան զարգացումները կային: Դա էր մի բնական, կենսական գործիք բարձր, որոյնով, վսեմ կենդանու՝ մարդուս զարգացումը, մտքերը, գաղափարները փոխանակելու: Գործն ծնել, զարգացրել, ազնուացրել էր իր տէրը՝ ազգութիւնը: Այնքան զարբեր, այնքան ժամանակների շրջան-

Բաւական է որ այդ կերպով վաղցին լեզուները, թէ մեզանից առաջադէմ են, բաւական է որ մեզ մնում է միայն նախնային նրանց այդ արած նշանաւոր քայլը համար, բայց և յաւելով պէտք է խոստովանենք, որ մեր հոգեւորականութեան անհոգութեան պատճառով դէպի ժողովրդական բարոյական կրթութիւնը, այժմ, մինչև որ էջ միաճանական իմաստունները թէ անդադար յետ են գցում իրանց թարգմանութեան գործը, թէ ուրիշներին էլ արգելում են այդ աշխատանքին ձեռք առլ:— Վաղցին կը տարածեն իրանց խօսեցած լեզուով տպագրած աւետարանը ոչ թէ միայն վաղցին լեզուով, բայց և հայերի մէջ, մասնաւոր վաղցին լեզուով խօսող թիֆլիսի և Քուխայիսի նահանգներում բնակող հայերի մէջ:

Մենք կրկնում ենք՝ աւետարանը ամբողջ կրթութեան, մայրենի լեզուի և ընթերցանութեան տարածման ամենազօրեղ գործիչներին մէջն է: Ուրեմն այն հասկանալի լեզու, որով ամբողջ կը կարգայ, կը բնութի և կը սիրէ աւետարանը,— այն լեզուն էլ հետզհետէ կը դառնայ նրա մայրենի լեզուն: Եթէ չը շտապենք թարգմանել աւետարանը հասկանալի, կենդանի հայերէն լեզուով,— շատ հայերի համար կովկասում աւետարանի վա-

ցերէն թարգմանութեան շնորհով վրաց լեզուն կը դառնայ մայրենի լեզու: Ահա մեր հոգեւորականութեան խորին տգիտութեան հետեանքները....

Եթէ այժմ Ս. Եջմածինը թարգմանէ էլ աւետարանը իր «Արարատ» ամսագրի լեզուով, այդ գիրքը դժուար թէ կարողանայ միջկրթացներէն աւետարանի հետ, որովհետեւ չնայ կարող չը խոստովանել թէ Վրաստանի հայ ժողովրդի համար վաղցին լեզուի մատչելի է, քան թէ «Արարատ» պէս հայերէն անուանված այլ լեզուն, որով ոչ ոք հայերից աշխարհիս երեսին երէք է խօսել չէ խօսում և չէ խօսի.... Իսկ կրթված հայի համար «Արարատ» լեզուն աւելի անհասկանալի է, քան թէ գրաբարն անգամ:

Ուրեմն միայն մէկ միջոց է մնում ճշմարիտ աւետարանի լոյսը մեր ժողովրդի մէջ տարածելու և մրցութիւն անել կարողանալու վրաց աշխարհաբար աւետարանին,— այն է թարգմանել աւետարանը ճշմարիտ կենդանի, գրական, արդեան կովկասեան աշխարհաբարով, որով մենք ամենքս խօսում ենք, ուսուցանում ենք, ուսնում ենք և գրում ենք..

Մենք այստեղ բերում ենք աւետարանից աշխարհաբար լեզուով թարգմանած մի փոքրիկ կտոր և հարցնում ենք մեր ընթերցող-

պատրաստ է նպատակ նորի կենսական զարգացմանը՝ փոխ տալով դորան դիմանական տերմիններ, հարկաւոր տարրեր, որոնք պակասում են, որոնց կարիքը զգացվում է:

Բայց այսպէս չէ հասկացվում մի ազգութեան մէջ՝ ուր նոյնպէս երկու տեսակ լեզու կայ՝—հին և նոր: Այստեղ հինը պէտք է տիրապետէ, ինչն նորի վրա: Ժողովուրդը, որոնքով խօսող ազգութիւնը ոչինչ նշանակութիւն, հեղինակութիւն չունի իր լեզուի վրա: Այդ նոր լեզուի թագաւորը հին լեզուն է: Դորա կենսւք ու մահը հին լեզուի ձեռքին է: Նոր լեզուի հիմունքները հին լեզուի մէջ պէտք է փնտռուեն: Այդ ազգութեան պատկանած երկու լեզուները չեն կրկնակրկում ընդհանուր լեզուաբանական օրէնքներին: Դորա մարդկութեան լեզուների շրջանից, բնութեան պայմաններից զուրս, առանձին պէտք է քննադատուեն: Այդ ազգութիւնը հայոց ազգութիւնն է, իսկ յիշեալ երկու լեզուները՝ մեր գրաբար և աշխարհաբար լեզուներն են:

Միայն մեզանում կը համարձակուեն համանման մտքեր յայտնել այնպիսի ինքնակոչ հայկաբաններ, որոնք ոչ մի տեսակ տարբարան հասկացողութիւն չունենալով, սեղմած, նախապաշարուած ուղեղով դուրս են գալիս ասպարէզ կամեմալով քերականաբան հայոց լեզուն: Միայն հայերի մէջ, ուր դեռ ևս չը կայ հասարակական, մտքակող կարծիք, կը համարձակուեն տղէտ մարդիկ դուրս գալ գրականական ասպարէզ երկխոսական դատողութեամբ և վիճիւններ կարգել հին ու նոր լեզուների վրա, անչափ անթիւ բառեր, խօսքեր, զարձակումներ փոխ առնել հին լեզուից նորի համար, և բորբոքովն ուղարկութիւն չը դարձնել ժողովրդի հեղինակութեանը:

Այն, միայն մեզանում համարձակվում են երկու այնպիսի մարդիկ, որոնք իրանց քէֆի համեմատ մշակում են լեզու, գրում են քերականութիւն, ստեղծում են լեզուի համար կանոններ, զարձակում են մի խօսու, և սորա հետ այն միտքն են յայտնում, թէ հասարակութիւնը պիտի ընդունէ այդ մշակուած (?) լեզուն: Հասարակութիւն, որ ոչ թէ լեզու ընդունող է, այլ լեզու տալով է:

Այո, միայն հայերի մօտ կարելի է յայտնել այն ողորմելի լեզուաբանական նախապաշարուածքը, թէ աշխարհաբար լեզուն մշակելով՝ մենք պէտք է հասնենք գրաբարին: Ինչպէս որ իտալական լեզուն մշակուելով պէտք է հասնի լատիներէնին: Ինչպէս ենք անմղ յոգնում՝ մենք արդէն

ներին՝ արդեօք եթէ այդպէս թարգմանվի ամբողջ աւետարանը, աւելի հեշտ չէին հասկանայ այդ սուրբ գիրքը, որ մինչև այժմ նրանց առաջ բողով ծածկած էր մնացել:

Ահա թարգմանութիւնը:

5. Եւ երբ որ աղօթք անես, կեղծաւորների պէս մի լինի. որովհետև նրանք սիրում են աղօթք անել ժողովարաններում և հրապարակների անկիւններում, որ մարդկանց երեսն: Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այդ է միայն նրանց վարձքը:

6. Բայց դու երբ որ աղօթք անես, մտիւր սեփականից, փակիր քո դռները և ծածուկ աղօթք արա դէպի քո Հայրը, և Հայրը որ ծածուկ էլ տեսնում է, քեզ յայտնապէս կը հնորէ:

7. Եւ երբ աղօթք անէք, հեթանոսների պէս շատախօս մի լինէք, որովհետև նրանք կարծում են թէ իրանց շատ խօսելու համար են լավում:

8. Ուրեմն նրանց նման մի լինէք, որովհետև ձեր Հայրը, դեռ իրանից մի բան չը խնայած, դիտէ թէ ինչ պէտք է ձեզ:

9. Ուրեմն դուք այսպէս աղօթք արէք. Մեր Հայր որ երկնքումն ես, թող սուրբ լինի քո անունը:

10. Թող քայ քո թագաւորութիւնը, թող լինի քո կամքը, ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրի վրա:

11. Տնւր մեզ այսօր մեր ամենօրեայ հացը:

12. Եւ մեր պարտքերը ներիւր մեզ, ինչպէս և մենք ենք ներում մեր պարտականներին:

13. Եւ մի տանիր մեզ դէպի փորձանքը, բայց աղափիր մեզ չարից, որովհետև թագաւորութիւնը

ունենք մշակուած, հինգերորդ դարու հայոց լեզուն: Գործ դնենք այն, գրենք նորանով, ինչ հարկաւոր է մեզ աշխարհաբարը, եթէ դարձեալ գրաբար պիտի դառնայ:

Այս երկխոսական միտքը, որ թագաւորում է Տաճկաստանի և մասամբ Ռուսաստանի հայերի ուսումնական (sic!) շրջաններում՝ այս անգամ դարձեալ կրկնեց Չմիւլեանիցում հրատարակվող «Արարատ» Արարատեան» գրաբար առաջխաբար հայոց խօսքը, անմարտիկ լեզուով խօսող լրագիրը:

Այդ պարոնները չեն հասկանում, որ մենք ինչ լեզուով գրում ենք՝ այն լեզուով էլ խօսում ենք: Այդ պարոնները չեն ուզում հասկանալ, որ հայոց ազգութիւնը, հայ ժողովուրդը իր լեզուով իր բարբառներով պէտք է լինի բնական հիմքը աշխարհաբար լեզուի: Այդպիսի մարդիկ դեռ չեն հասկացել, որ գրաբարից անկանոն, անչափ կերպով փոխ առնելը կը խանգարէ միայն աշխարհաբար լեզուի կանոնաւոր զարգացմանը: Այդ մարդիկը դեռ չեն հասկացել, որ կովկասեան հայ աշխարհաբար լեզուն մշակուել է այսքան տարիներ ընթացքում և մշակվում է, բայց ոչ թէ մնում է այնպէս, ինչպէս որ էր երեսուն տարի սորանից առաջ:

Ինչ զանազանութիւն էք դառնում՝ ասացէք ինդրեմ, երեսուն տարի սորանից առաջ այստեղ թիֆլիսում հրատարակվող «Երկու լեզու» լրագրի լեզուի և Տաճկաստանից հայերի համար հայկաբանութեան օրինակ համարվող «Ար. Արարատ» (տես թիւ 1041) այժմեան լեզուի մէջ: Ահա ձեզ քաղաքների երկուսից էլ:

«Եւ հաւատան թէ զանկէց եղեալ Սուլթան «Ապտիւր-Աղլին» որ ի սկզբան իւր ընտանեօք Թօփ «Գարուի պալատը կը գտնուէր ընդ դիւրաբանական «Նիկողոսեան» 25 միլիոն լուս ունի եղեր, յոբրոց հինգ միլիոն, և այլն...» Բոլոր գրուածները լրագրի այդպիսի ոճով են: Հիմայ մեր հին լրագրից՝ «Երկու լեզու» միում կ. Պոլսոյ գլայս լուր ծածուկացանէս: Ի 7 յուլիսի նախաբարն Տարախաբ «հիկ գործոց ընկալաւ ի նախազանէս խորհրդաբանի... և այլն...» Բոլոր գրուածները լրագրի այդպիսի ոճով են: (Տես «Երկու լեզու» համար 33, 1847 տարուայ):

Եթէ հիմայ Տաճկաստանի հայ լրագրութեանը ասեն որ երեսուն տարուայ մէջ իրանք ոչինչ առաջադիմութիւն չեն արել, ոչ մտքերի և ոչ լեզուի կողմից զարձակ չեն հաւատար:

գործը մեծն ու փանքը յարեանքն քանն է: Ամեն (Հեռերով Մասնակուհի. գ. 2.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՄԱԿ ԱՅԿԱՅԻՆ ԳՊԱՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Թէև մեր տեղական լրագրողներում մի քանի հարեանցի տեղեկություններ երևեցան Ղազար լրագրող պատահած դժբաղդունքների մասին, բայց նրանք չեն կարող ճշմարիտ պատկերացնել ընթերցողը առաջ այդ դժբաղդունքների իսկական չափը: Սորա համար հարկավոր է առաջ բերել թուանդաններ, որը միայն կատարում է պարզապես ցոյց տալ ֆինանսի չափը և աստիճանը, որին ենթարկվեցան զղարկված մի գիշերույց ցորի պատճառով:

ՂԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ս. Ս. Գևորգյան միայն այդպես էր ֆինանսը չէ, այլ և բերաբեր առաջնապես, որի ոչ միայն բարեկեցությունը, այլ նաև իսկ գոյությունը կապում էր այդպիսի գոյություններին հետ: Քանի որ կենդանի էին այդքան, կուշտ էր մշակել և ապահովում նորա ընտանիքը: Չբացառապես այդպիսի պատու, դատարանը աշխատանքը, — մշակող պետք է բաղձի, կամ գաղթականություն մեջ որոնի իւր ընտանիքի ապահովումը: Սկզբից թէ ինչ է նշանակում աշխատանքի դարձուլը, — նա կը հասկանայ թէ ինչ վիճակի մեջ է գործում վրձնայում մշակող, վերածնունդը իր օրական աշխատանքից:

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԱԿԻՆ

Թիֆլիս, յունիսի 17-ին

զանազան հասարակական, մեր ընդհանուր հայրենիքի մեջ սկզբնական կրթությունը վերաբերված է: Հասարակ հասարակության մեջ միայն այն ժամանակ քաղաքակրթության բարեբար ազդեցությունը կը տարածվի մեր երկրում, միայն այն ժամանակ հնարավոր կը լինի՝ եթե ոչ ժողովրդի կատարելագործությունը, գոնե առաջին քայլը դեպի այդ բարեկեցությունը, — երբ այս կամ այն լեզուով, այս ինչ կամ այն ինչ ուսումնարանների օգնությամբ միջոց կը տրվի մեր երկրի ճշմարիտ ընդունակ մարդկանց, թե քրիստոնեական վարդապետություններ, թե եւրոպական գիտություններ իսկական լոյսի հետ: Աւերելը կը լինի այդպիսի ապացույցներ, թե այնտեղ, ուր ամենից մաքուր լուսով է վառվում ֆրիստուրի շահը, ինչպես զերմանիայում և Արևմտյանում, — այնտեղ և ամենից մաքուր, և իր բարոյականություններ վառվել է ընտանեկան կենսաբան Պետք է կայ լինել, այն ճշմարտությունը չը հասկանալու համար, թե որտեղ աւելի հեշտ է լինում ծանօթանալ օտար լեզուներին, իսկ նույն օգնությունները և այն ամենին հետ, որ բովանդակում է իր մեջ աշխարհը, բոլոր անցնող դարերից ժամանակված և մշակված, թե նրբական, և թե բարոյական կողմից, — այնտեղ և աւելի մասնակի է լինում մեզ բարեբան և լուսավորել մեր գոյությունը:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Թունիսի 18-ին

Ս. Ս. Ս. Գևորգյան լուսավորության պայքարը պարզապես մի կողմից չէ, այլ և բերաբեր առաջնապես, որի ոչ միայն բարեկեցությունը, այլ նաև իսկ գոյությունը կապում էր այդպիսի գոյություններին հետ: Քանի որ կենդանի էին այդքան, կուշտ էր մշակել և ապահովում նորա ընտանիքը: Չբացառապես այդպիսի պատու, դատարանը աշխատանքը, — մշակող պետք է բաղձի, կամ գաղթականություն մեջ որոնի իւր ընտանիքի ապահովումը: Սկզբից թէ ինչ է նշանակում աշխատանքի դարձուլը, — նա կը հասկանայ թէ ինչ վիճակի մեջ է գործում վրձնայում մշակող, վերածնունդը իր օրական աշխատանքից:

ՆԱՄԱԿ ԿԱԿԻՑ

Յունիսի 10-ին

Ս. Ս. Գևորգյան լուսավորության պայքարը պարզապես մի կողմից չէ, այլ և բերաբեր առաջնապես, որի ոչ միայն բարեկեցությունը, այլ նաև իսկ գոյությունը կապում էր այդպիսի գոյություններին հետ: Քանի որ կենդանի էին այդքան, կուշտ էր մշակել և ապահովում նորա ընտանիքը: Չբացառապես այդպիսի պատու, դատարանը աշխատանքը, — մշակող պետք է բաղձի, կամ գաղթականություն մեջ որոնի իւր ընտանիքի ապահովումը: Սկզբից թէ ինչ է նշանակում աշխատանքի դարձուլը, — նա կը հասկանայ թէ ինչ վիճակի մեջ է գործում վրձնայում մշակող, վերածնունդը իր օրական աշխատանքից:

ՆԱՄԱԿ ԿԱԿԻՑ

Թունիսի 14-ին

ԱՅՍԱԲԱՄԱՐԻՑ գրում են մեր լրագրին յուշի 1-ից հետևաբար «Մտ» օրերս կարևորագույն և անձրենները շատ վնաս են տուել մեր գաւառին և ուրիշ գիւղերում երկու շրջադասեր անձրեի և կարևորագույն աստիճանները բոլորովին գնանին հաստատվել են, այնպէս որ այլ ևս չբարձրացնեն յայտնիքս մնացելու Այս օրերն ի վրայում երկու տուն չուրք քանդել և քարերով լցրել, նոցա ցորենի ամբարները բոլորովին վնասվել են Այս տները բնակիչները փախչելով հազիւ ազատվել են Նոյնպէս Այս օրերն շատ վնասված էր:

Տարցի այդ տեսակ վնասի հետ հաղել թէ կը համաձայնի Աւստրո-Ունգարիան, որին համարել է կարող լինել հարաւային սլավոնական անկախ երկրները ընդարձակելու: Վերջին հետազոտը հաղորդում են որ պատերազմ Սերբիայի և թիւրքիայի մէջ այժմ անփախելի է:

ԹԻՒՐԿԻԱ

Վերջին հետազոտները հաղորդում են, որ Նոյն Վեճուժիները Աուստրո-Ունգարիան և Վերմանիայի կայսրները պաշտօնապէս տեղեկացրած են, թէ պատերազմը Սերբիայի և թիւրքիայի մէջ անփախելի է: Սերբիական տերութիւնը մի ուլախմատում է ուղարկել Կ. Պոլս, որի պայմանները Բ. Վուսթը չէ կարող ընդունել: Եւրոպական պետութիւնները ամեն միջոցներ են գործ դնում խաղաղութիւնը պահպանելու համար: — ՏԻՒՐԿԻԱ լրագրի հետազոտը հաղորդում է որ Անգլիան և Աուստրոսերբիական համաձայնագրի Սերբիային թիւրքիայի դէմ պատերազմ սկսելու, իսկ իրանը վնասել են իրանց չէզոք պահպանել պատերազմի ժամանակ: Յունիսի 16 (28) լուր տարածվեցաւ Բիւրաղում որ իբր թէ սերբիական զօրքի մի մաս, կամաւորների զօրքերը, արդէն անցել են թիւրքիայի սահմանները: Բոսնիացիները յայտնեցին Սերբիայի Միլան իշխանին Բոսնիայի թագաւորը: Ներքին Վիլհելմի բնակիչները ճանաչեցին Վերնոզո-րիայի իշխան Նիկոլայովիչի իրանց երբի վրա իշխան: իշխան Միլան յունիսի 18 (30) ուղերովեցաւ դէպի զօրքը: Ժողովուրդը յափշտակված կերպով ընդունում է ամեն տեղի իշխանին: Միտիսիները ճանապարհ են գցել իշխանին մինչև Սկզբինի քաղաքը: Թիւրքիայի սահմաններին հասնելով, սերբիական իշխանը կը յայտնի զօրքին պատերազմ սկսելու հրամանը: Միջոցով փաշան պատրաստեց թիւրքաց սահմանադրութեան ծրարները: Մի ուրիշ անգամ կը ծանօթացնէր մեր ընթերցողներին այդ պրօէկտի հետ ինչպէս նրան հաղորդում է «Pester Correspondenz» լրագրի: Սահմանադրութեան պրօէկտը բաւական պատասխան է, բայց Տարցը դարձնում է արդեօք կարող է նա գործ դրվել թիւրքիայի պէս մի երկրի մէջ: Թիւրքաց միտիսիների կողմէն մէջ անհամաձայնութիւն է յայտնվել այդ սահմանադրական ծրարի մասին, մասնաւոր դաստնութիւնների կատարեալ ազատութեան կէտի մասին: Միջոցով փաշան առաջարկում է որ մահմեդական կրօնը թիւրքիայում էլ չը լինի պետական կրօնը, այլ որ բոլոր կրօնները օրէնքների առջև հաստատ իրաւունքներ ունենան: Ասում են որ սահմանադրութեան գործադրութիւնը յետ է գցվում անորոշ ժամանակով: Կրիտիկան կզու թրիտոնեայ ազգայնականութիւնը դիմել է թիւրքաց տերութեանը խնդրելով որ նահանգապետը նշանակվի միշտ քրիստոնէաներից, որովհետեւ բնակիչների մեծ մասը այդտեղ քրիստոնէաներ են: Ինչպիսիք մէջ ինչպէս են և ուրիշ թէ հասարակական, թէ անուսական վերանորոգութիւնների պահանջները: — Կ. Պոլսի թիւրքաց լրագրութեան թերթերը բաժանվել են երկու թշնամական բանակների վրա: Երիտասարդ — թիւրքիայի կուսակցութեան օրգանները ստում են որ թիւրքիան չընդունի մի նոր, կատարեալ ազատութեան վրա հիմնված ընթացքը, պետութեանը սպանում է կատարեալ անկումն, իսկ շինթիւրքաց կուսակցութեան լրագրիները հաստատում են որ այն ժամանակ պետութեան կատարեալ անկումն է սպանում, եթէ թիւրքաց տերութիւնը կը խլի մահմեդական կրօնը նորա հին նշանակութիւնը, նորա հեղինակութիւնը և կը հաստատարցնի բոլոր դաստնութիւնները պետական օրէնքների առջև: — Յունիսի 19-ից (յուլիսի 1) ՏԻՒՐԿԻԱ լրագրը ստացել է հետևեալ հետազոտը Սերբիայի իշխանը դիմեց թիւրքիայի տերութեանը, առաջարկելով որ թիւրքիան հրաժարվի Բոսնիայից և թող այդ գաւառի Սերբիային միացնելու: Միլան իշխանը այդ առաջարկութիւնն անելով, խոստացաւ պահպանել առաջվայ յարաբերութիւնները թիւրքիայի հետ, այն է ճանաչել այդ տերութեան բարձրագոյն Տովնաւորութիւնը (սիւզլուքիտէտ): Բաղաբան շրջաններում կարծում են որ այդ կերպով հաստատ կը լինի համաձայնել երկու երկրների, առանց պատերազմի դիմելու: Պատերազմը դուր ևս սկսված է: — Յունիսի 20-ից (յուլիսի 2) ստացված է երկրորդ հետազոտը որ տեղեկացում է, թէ Միլան իշխանը հրատարակել է պատերազմի մասին յայտարարութիւնը: Այդ հրամանի մէջ ստված է թէ Սերբիան այլ ևս չէ կարող անտարբեր հանդիսանալ միտիսիների և Ներքինի միջոցով:

ՅԻՐԱՆՍԻԱ

Ինչպէս յայտնի է ժողովրդական լրատուութեան միջոցով, պ. Վադիլիգոսն, առաջարկել է պատգամաւորների ժողովին Ֆրանսիական բարձրագոյն դպրոցների մասին մի նոր պրօէկտ, որտեղ նա պահանջում է որ միայն պետական բարձրագոյն դպրոցները իրաւունք ունենային ուսուցանելու տիրուղներ և իրաւունքներ տալ ուսումնառողները ուսուցանողներ և որ այդ իրաւունքը զրկվեն կամ թօյլի համալսարանները: Պատգամաւորների ժողովում պ. Վադիլիգոսն առաջարկութիւնը ձայների բազմութեամբ ընդունեցաւ: Բայց երկու կայ որ սենատում այդ առաջարկութիւնը չը ընդունվի: Լրագրիները հաղորդում են որ իբր թէ Վադիլիգոսն յայտնել է թէ միտիստերութեան պաշտօնից հրաժարական տարու է, եթէ սենատում նրա պրօէկտը չընդունվի: Արքեպիսկոպոս Գիւլպանու մի բողոք է գրել «Ս»-ը եւք գնում վերնագրով, որի մէջ համազում է սենատի անհամաձայնութիւնը պ. Վադիլիգոսնի առաջարկութեան դէմ բուէարկել «Opinion Nationale» լրագրի հաղորդում է որ իբր թէ հանրապետութեան նախագահ, մարշալ Մակ-Մահոն յայտնել որ պաշտպանելու է Վադիլիգոսնի առաջարկութիւնը: — Ֆրանսիական սենատի նստում, յունիսի 21-ին, Շէլլէրը առաջարկեց ինկատի առնել նրա առաջարկութիւնը մահվան պատիժը վերցնելու մասին: Շէլլէրը սպացուցեց իր ճանի մէջ որ մահվան պատիժը երբէք չէ նպատակ յանցանքների պակասելու մարդկային հասարակութեան մէջ: Վիճակագրութիւնը սպացուցանում է որ այն երկրում, ուր այդ պատիժը ոչնչացրած է եղել, ինչպէս օրինակ դեռ անցեալ դարում Տոսկանայի դքսութեան մէջ, յանցանքների թիւը ոչ աւել է քան առաջ, ոչ էլ աւել է քան թէ ուրիշ երկրներում: Թիւրքիայի պաշտպանելով Շէլլէրի առաջարկութիւնը սպացուցեց մի երկար և զեղչելի ճառով որ ընդհանրապէս այն երկրներում, ուր վերցրած է եղել մահվան պատիժը, յանցանքների թիւը պակասել է, հասարակութիւնը աւելի բարոյական է դարձել: Պատմական, իրաւաբանական, հոգեբանական, վիճակագրական շիջ սպացուցները ի զուր են... սենատը չընդունեց Շէլլէրի առաջարկութիւնը և մինչև անգամ չը թող տուեց այդ առաջարկութիւնը քննութեան ենթարկել... Ֆրանսիական սենատը այս անգամ էլ սպացուցեց այն առաջի ճշմարտութիւնը թէ ոչ որ այնքան խուլ է, որքան այն մարդը, որ էլ ուզում լսել...

ՍՊԱՆԻԱ

Սպանիական սենատը ընդունեց ձայների բազմութեամբ նոր առաջարկված օրէնքը դաւաւաւութիւններին համարողութեան վրա: Կամօթի հոգեբանականութիւնը վերջով լից է որ այդ օրէնքը անցաւ: Կղերական անձնաւորութիւնները նշանաւորները յայտնել են որ անկողնայ և միշտ պատերազմելու են այդ օրէնքի գործադրութեան դէմ: Առհասարակ ամեն տեղ և միշտ կղերականութիւնը յատկանիչ է նախ քարոզել կոյր, ամենահարատակ, ամենատար հետազոտութիւն ամեն հեղինակութեան, — իսկ երբ որ նոյն հեղինակութիւնը, երկրի օրէնքը, նրա օրգանների դէմ է ընթանում, այն ժամանակ կղերական կուսակցութիւնը դառնում է յուզափոխական, հերքում է մինչև անգամ երած օրէնքները... նոյնը արել է կղերական կուսակցութիւնը Կերմանիայում, նոյնը Ֆրանսիայում և իտալիայում, նոյնը էլ անում է այժմ և Սպանիայում:

ԲԷՆԻՒԱ

Պատգամաւորների ժողովը վերջին բնորոշութիւնների մէջ Բեյզիայում, յաղթող դուրս

կիւս կղերական — յետադէմ կուսակցութիւնը և ազատամիտ կուսակցութիւնը անաջորդութիւն ունեցաւ: Ինչպէս միշտ կղերականները, որք ամեն երկրում յայտնվում են իրանց անամօթութեամբ, սկսեցին հրապարակապէս աղմկայել կերպով տունը իրանց յաղթութիւնը պատասխան կուսակցութեան վրա: Այդ կրկնեցաւ Բեյզիայի այլ և այլ քաղաքների մէջ: Այդ խաւարի և մտաւոր մահվան, սե, ողորմելի կուսակցութեան յանդուգն, անամօթ տնամարտութիւնների վերջնական անկողնայ: Բրիտանի մէջ յունիսի 14-ին գործուրը մեծ բազմութեամբ հաւաքվելով, անցաւ պալատի առջև աղաղակելով «Իրանց կղերականները»: Ժողովուրդը յարձակեցաւ մի քանի յետադէմ պատգամաւորների բնակարանների վրա և բաւական վնաս բերեց այդ բնակարաններին: Կատարած ժողովուրդը կատարեց պատուհանները եզուրների ուսումնարանում: Միւս օրն էլ ամբողջ քանի մի հազար անմիջանկէպ բաղկացած, շքում էր Բրիտանի փողոցներում նոյն աղաղակներ թէ կամօթի կղերականները անկողնայ և սպառնալով յետադէմներին և կղերականներին... Ամեն տեղ փողոցներում գործ էր կանգնած: Զօրքի և պոլիցիայի միջոցով տերութիւնը կարողացաւ աւելի ծանր անկողնայութիւններին առաջն առնել: Մի քանի փողոցներում կուսիներ պատահեցան գործի և ժողովուրդի մէջ: Երկու կողմին էլ մարդիկ վերադարձան: Նոյն անկողնայութիւնը կրկնեցան և Բեյզիայի այլ նշանաւոր քաղաքներում, ինչպէս Անտալեպէն, Գէնտ, Բրիւզզէն: Գէնտի մէջ կամօթի լրագրի խմբագրատան պատուհանները քարերով կոտորեց ժողովուրդը, սաստիկ հայհոյանքներ արձակելով կղերականների դէմ: Իսլր, Լուվեն, Կուրբրէ քաղաքներում նոյնպէս յունիսի 14-ին, 15-ին, և հետեւալ օրերը ժողովուրդի խմբերը հազարներով չընդունեցին փողոցներում, բողոքելով կղերականների դէմ: Ամեն տեղ գործի և ժողովուրդի մէջ կղերական պատահեցան: Մի քանի անմիջանկէպ միջոց սպանեցան գործի և պոլիցիայի ձեռքով: Տէրութիւնը սպասելով նոր անկողնայութիւնների ժողովուրդի կողմից, հրամայել էր գործերին պատրաստ լինել: Ոչնայ այն թշուաւ, խոտովութիւնը զցող, կղերական սե կուսակցութեան Բեյզիայի վրա ունեցած վնասակար աղբիցութեան հետեւալը... այն դրժոխաւոր կուսակցութեան, որ իրան անամօթ, կեղծաւոր կերպով միշտ և ամեն երկրում և կղերականները սերող կուսակցութիւն է անուանում...

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Յունիսի 12-ին

Ձեզ յայտնի կը լինի արդէն լրագրիները, որ սահմանադրութեան գործադրութիւնը յետ է գցված անորոշ ժամանակով: Բայց եթէ նա գործ չընդունի է, արդեօք կարիքի է սպասել որ նա բարեբար աղբիցութիւն կուսակցութիւնը պետութեան վերանորոգութեան վրա, երբ որ ժողովուրդը խորին տոգեութեան մէջ է, երբ որ մահմեդական կրօնը մոլորեցնողութիւնը և ճնշող ոյժը միշտ արգելք կը լինի երկրի մէջ ազատութեան մտնելուն և արմատաւարում: Սուլթանը փոխվել է, այդ ճշմարտ է, բայց կատարելութեան եղանակը նոյն է մնացել... Ազատամիտ երկրներում, օրինակ, կատարվում են նոյն անասելի բարբարոսութիւնները, ինչպէս և Արդիւ-Արդիլ ժամանակ: Նորբերում Կ. Պոլսի կենտրոնական տերութիւնը հրամայել է անհնայ ոչնչացնել Բոլգարիայում 150 զեւր: Այդ զեւրը ներկայացնում են այժմ աւերակների մի կոյտ, ծերերը որք չը կարողացան փախչել սարերը կոտորեցան, 60,000 կանաչը և աղբիները դրի բռնեցան և հրամայված է նրանց տանել Ֆորթ-Ալիս և ծախել անտառի վաճառանոցներում, ինչպէս ստորակիւսին: Չանաղան բերդերում բանտարկված են մօտ 20,000 առողջ բոլգարացի երիտասարդներ, նրանք թոււմ ստելի քան 2000 մարդ սովից և բերդերում ստացած հրամաններով մեռել են... Այդ տեսակ բարբարոսական վարմունքը վայրենի տերութեան կողմից տեսնելով, հարցնում ենք արդեօք ծիծաղելի չէ թիւրքիայի սահմանադրութեան վրա խօսել... Այդ տեսակ բարբարոսութիւնները անթիւ են: Կամակորի նահանգից հաղորդում են մասնաւոր նամակներով որ այդ նահանգի Բալիկ անուանված զեւրը մէջ պետական հարկերի հաւաքման պատճառով մի ուստիլանի և մի քրիստոնէայի մէջ վնաս բաղկելով, ոտարկանը սպանել է քրիստոնէային: Այն ժամանակ քրիստոնէաները հաւաքվելով և կառա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Կ. Պոլսի մէջ պատահած յիդաւոտութեանց յետոյ, կարծես թէ էլ առիթ չը կար եւրոպական մի որ և է պատերազմի յայտնվելու: Արդէն եւրոպական քաղաքական շրջաններում համոզված են որ պատերազմ լինելու չէ: Բայց այժմ դրութիւնը կրկին փոխվում է: Թիւրքիայից մասամբ կախված, նորան հարկատու երկիր, Սերբիան, այնու ամենայնիւ այնքան քաղաքական ինքնազոյութիւն ունի, որ սերբիական ժողովուրդը կարողացաւ վերջին տարիների ընթացքում ոչ թէ միայն զարգանալ նկատաչէ և բարոյացաւ, բայց և քաղաքական կողմից այնքան ոյժ ստացաւ, որ կարող է այժմ հանդէս դուրս գալ թիւրքիայի դէմ, որպէս թիւրքահայաստակ սլավոնական աշխարհի օգուտների պաշտպան: Սերբիան բաւական նշանաւոր փոխառութիւն արաւ, կազմակերպել իր զօրքը և այժմ կամ պէտք է անպատճառ պատերազմ յայտնել թիւրքիային, կամ եթէ այդ վնասողական քայլը չանէ, — նրան սպանում է ներքին խռովութիւն, ժողովուրդի անբաւականութիւն, յեղափոխութիւն... Սերբիայի իշխան Միլանի համար իր գահի վրա ամեն նստելու ուրիշ միջոց չէ մնում, եթէ ոչ բաւականացնել պայմանական հասարակական կարծիքի պահանջներին: Այն է զէնքը ձեռին, պաշտպան դուրս գալ թիւրքահայաստակ ճնշված, քրիստոնէայ սլավոնական երկրներին... Մի ուրիշ կէք էլ կայ այդ դրութեանց, մի լուծումն այդ դժուար խնդրի, որ կարող էր բաւականացնել գոնէ ժամանակաւորապէս, սլավոնական երկրների պահանջներին: Այն է ինչպէս եւրոպական երկրներից ոմանք առաջարկած են և Անգլիան երևում է սորան իր համաձայնութիւնը տուած է Բոսնիայի մեծ մասը ընդհանուր եւրոպական համաձայնութեամբ միացնել Սերբիային: Բայց արեւելեան

վարութեան պաշտօնատան վրա յարձակելով՝ ուտիկանին սպանել են: Կռիւր բաւական մեծանաւոր, Գամակոսի կուսակալը զօրք է ուղարկել և հարկ կարողացել է հանդարտեցնել խռովութիւնը:—Օղեան Գրիգոր էֆէնդին, որ հասարակական շինութիւնների խորհրդական պաշտօնակց է, նորբերումն աւելի մի բարձր աստիճան էլ ստացաւ: Սուրբաթից, այն է պալիտայի տնտեսութեան, 10-ին կառավարութեան կողմից իրան տուած շոգնաւի վրա ուղղորդեցաւ Եւրոպայ թրիպաք լրագիրներից մի քանիս կարծում են որ Օղեան էֆէնդին օգտիւնութեան համար Եւրոպայ է գնացել: Բայց ուրիշ կողմից լուրով է, թէ Օղեան էֆէնդին ամենևին հիւանդ չէ և իբր թէ նա ուղարկեցաւ Եւրոպայ պաշտօնական մի յանձնարարութեամբ: Ասում են որ նա պէտք է գնայ Ֆրանսիա, այնտեղից Գերմանիա և վերջապէս պիտի Ս. Պետերբուրգ անցնէ:—Հարզորում են թէ Փարս Աբիայի այլ և այլ տեղերում պատահում են բարբարոսական անցքեր, որոնց զոհ միշտ քրիստոնեաներ են լինում:—Կիպրոս կղզու վրա կեցող Ամերիկայի հիւպատոսը նորբերումն մի յունական նաւի միջոցով ուղարկել է Նիւ-Իորկի թանգարանը 100-ի չափ սնունդ կանաչան հուսկիներով լի, որոնց տարիներով ինքն էր ծողովում յիշակ կղզու վրա: Ասում են որ այդ հուսկիներով մէջ կան խիստ հին և թանգարանի առարկաներ:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍՏԻՑ
Ստորաբուրգ, յունիսի 15

Այս օրերս վերին Հոստիսի Գէօրգիական ընկերութեան ժողով (կոնգրէս) աւելիով եղայ Բաղդադ-Բաղդադի մէջ: Սաստիկ փոխվել է այդ քաղաքը, ինչպէս ի հարկէ նոյնքան գեղեցիկ է մնացել, ինչպէս և առաջ, բայց բնույթ և սնունդով ինքից քիչ քիչ տարբերակներ ունի: Երբեք այնքան հրամանով վերադառնում լինուց յետոյ, էլ չը կայ այն չքեղութիւնը, այն առաջվայ կեանքը... այդ պատճառով բոլորը թէ բնակարանները, թէ սահասարակ կենական պիտուքները շատ աւելի էժան են այժմ, քան թէ առաջվայ ժամանակներում: Բաղդադ-Բաղդադը դարձել է մի համաս, փոքրիկ գերմանական քաղաք, այն ինչ լուրէս խաղի գործովն են ժամանակ նա Վոնգոնի, Փարիզի, Բերլինի, Ս. Պետերբուրգի և Վիեննայի արխիտեկտոնների և demi-monde անուանված հասարակութեան ամբարանաց էր լինում:... Բուլչեփի աւերող, քանդող խաղը, որ պատճառ եղաւ շատ կարողութիւնների անակնադատ, դադարի դքսութեան Վերանային միանալուց յետոյ, արգելեցաւ: Առհասարակ ամբողջ Գերմանիայում այդ խաղը այժմ արգելված է, և նրան դեռ համարում են երեք տէրութիւնները: Շվեյցարիան (Սակսոնի մէջ), Բելգիան (Սպա քաղաքում) և Մոնակոյի փոքրիկ դքսութիւնը: Բուլչեփ խաղը այնքան աւերող, քանդող է, այնքան անգամ պատճառ է տուել յանցանքների և անձնապատմութիւնների իջնակներին, որ և այն քաղաքներում, որտեղ դա թիւղ է տուած, քաղաքի բնիկներին միշտ արգելված է լինում մասնակցել խաղերին: Մասամբ կանաչի պակասութիւնը Բաղդադ-Բաղդադի մէջ, իմ այդտեղ անցած երկու օրվայ ընթացքում, դուրս է և այն պատճառով էր երևում, որ երկու օրն էլ որ մենք այդտեղ մնացինք՝ անդադար անձրևում էր: Գիօրգիական ժողովը բազմավիշ էր: Նստից և պարապմունքներից յետոյ, ընդհանուր ճաշ էր, այնպէս որ չը նայելով անյաջող եղանակին, էլ ժամանակը շատ ուրախ անցկացաւ: Գերմանիայի պրոֆէսորներից շատերը եկան այդտեղ իրանց ամուսնիներով: Ես առիթ ունեցայ նոր ծանօթութիւններ կապել զանազան միտաբանների հետ և նոյնպէս պատահեցի մի քանի հին ծանօթների, մանաւանդ Հայրենիքից:

Սայ վերջին շաբաթի անընդհատ անձրևները առանց հետանալի չը մնացին: Բողոքի լիք կրկին արիւրից դուրս է եկել: Հռէնսուր, ասում են, երեկ աւելի բարձր էր, քան թէ որ և իցէ ժամանակ եղած է 1855 թականից: Այստեղ, Ստորաբուրգում, դեռ ոչինչ չէ նկատվում:

Սայ օրերս կարողում մի հետաքրքիր լուր գերմանական լրագիրներից, շտապում են հարդրել նրան ընթերցողներին:

Մինչև որ հիստորիկ Ամերիկայի միացեալ հանգիները և Անգլիան տարիներով վիճարանում էին կանանց իրաւունքների հարցի մասին, առանց մի որ և է վճարողական հետևանքի հասնել կարողանալու,—ամերիկական Չիլի հանրապետութիւնը

վճանց կանանց նոյն իրաւունքները չորհել, ինչ որ ունեն բոլոր քաղաքացիները, այսինքն՝ կառավարութեան հարցերում և ընդհանուր կայսրաւուրթեան գործի մէջ ճանաչել նրանց անմիջական մասնակցութեան իրաւունքը: Այդ իրաւունքը կը վայելէ արամարդական հաւասար ամեն մի կին, որ կարող է զբի զիտե և հասել է որչա հասակին: Շատ հետաքրքիր է, եթէ հաստատվի այդ լուրը:...

ՄԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հարզորում են, որ ժամ աստի տը Բաղդադի մէջ այժմ բոլորովին անհետացաւ: Բըժլիկներից ոմանք կարծում են, որ այդ ժամատան անուանված հիւանդութիւնը մի տեսակ մահաբեր տենդ էր:

Գանի մի շաբաթ արանից առաջ, ինչպէս հարզորում է «Journal de St. Petersbourg» լրագիրը Գրեզդէնի մէջ գումարովեցաւ մարմինները և այրման կուսակիցների գերմանական ժողովը: Այդ ընկերութիւնը հետզհետէ ընդարձակվում է Գերմանիայում, հաշուով արդէն բազմակիս կուսակիցներ և ունի իր ձեռքում երեք լրագիրներ որք պաշտպանում են մարմիններ այրելու հարցի անհրաժեշտութիւնը: Բայց եթէ Գրեզդէնի վերջին ժողովը շատ բազմակիս չէր,—ընդ ամենը մօտ 500 անդամ ներկայ էին նստերին,—այդ այն պատճառով է, որ գերմանական տէրութիւնը դեռ չէ համակրում այդ գաղափարին: Մարմինների այրելու ընկերութեան կուսակիցները չեն պահանջում որ տէրութիւնը խկոյն ընդունէ նրանց միտքը, բայց ինզորում են միայն որ արվին նրանց կատարեալ աջատութիւն տարածել իրանց գաղափարները: Ընկերութիւնը յոյս ունի որ ժամանակը ընթացքով հնարեալ կը բազմանան այդ նպատակը բարոյական և առողջապահական վերանորոգութեան կուսակիցները: Ընկերութիւնը վճռել է հիմնել դարձեալ մի նոր լրագիր իր գաղափարները ժողովրդի մէջ տարածելու համար և ժողովը դիմել է տէրութեանը խնդրելով, որ գնէ կառավարութեան կողմից չարգելվի այրել այն անձանց մարմինները, որք լրանց մահով առաջ իրանք են խըղզորում չը թաղել նրանց գեանի մէջ:...

Գունիսի 18-ին օրերը Բիլչաքի և կրկին մի կոնցրտ տուէց Թիֆլիսի ամառային թատրոնում: Լուսւմ ենք որ երկրորդ կոնցրտից յետոյ օրերը թողել է մեր քաղաքը և վերադարձել է կրկին Ս. Պետերբուրգ:

Գունիսի 12-ին սկսվեցան Թիֆլիսի ծխական ուսումնարաններում տարկան հարցաքննութիւնները, նախազանութեամբ թէմական վրադատելի և աշակերտների ու աշակերտուհիների ծնողների ներկայութեամբ: Չը նայելով ուսուցիչների շատ անընդհատ լարձատրութեան (30 կայէկ դասական), պէտք է խոստովանել որ նորա աշխատելից ևս շատ բարեխղճաբար կատարել իրանց պաշտօնը, այնպէս որ ամենք զո՛ք մնացին երեսմաներից ցոյց տուած առաջադիմութիւնից: Յանկալի է որ մեր դպրոցական կառավարութիւնը ուղարկութիւն դարձնէր հայ ծխական ուսուցիչներին անմիջապէս զրուցիլը բարձրագույն վրա: Առհասարակ մեր ամբողջ կողմանայ հայ ծխական դպր. ցնիներին ժողովուրդը բաւական փող է նուիրում, բայց եկեղեցական գումարները կառավարված լինելով քանաններին և երեցիկտաններից, ուսուցիչները շատ սղորմելի ուժիկ են ստանում, իսկ ուր են գումար՝ փողերը՝ յայտնի չէ:... Կիբլապալէս երգ կը լինի որ ժողովուրդը իր ձեռքը կը վերցնէ եկեղեցական գումարների անտեսութեան հակողութիւնը, կը նշանակէ օրինաւոր ուժիկ քանաններին, որով նորա իրանց ընտանիքներով կարողանային բաւականաշաւ և եկեղեցական գումարները չը յափշտակել, երբ կը լինի վերջապէս որ ժողովուրդը հասկանայ թէ այլ ճանապարհ չը կայ ժողովրդական դպրոցների սկստութիւնը բարեկարգելու, երբ կը լինի որ մենք հասկանանք թէ ժողովրդի կրթութեան հիմքը բարեկարգված տարրական դպրոցներ են:... Գահանների ձեռքից եկեղեցական գումարները վեր առէք, ինչպէս կը կառավարեցէք, քանանները թիւր պակասեցրէք, նրանց հաստատ ամական ուժիկ տուեցէք, ծխական վարձապետներին ապահովեցրէք:... Հարկաւոր է որ քանանները, ժողովուրդական հոգեւորականները, աւելի կարեւուն ունենան ժողովրդից, ծուխից, քան թէ կայսրապետներին: Գորա մէջն է միայն ձեռ ուսումնարանական կարմակերպութեան փրկութիւնը: Մինչև որ այդ անըք, ձեռ ուսումնարանները երեք առաջ գնայ չեն կարող:... Եթէ այդ անըք, աւելի լաւ է՝ փակեցէք ձեռ բոլոր ուսումնարանները... այդ անմիջապէս, խայտառակ դուրսէն մէջ նըրանց գոյութիւնը սպարդիւն է:

Գունիսի 27-ին, կիրակի օրը Թիֆլիսի ամառային թատրոնի պիտուակը արվի կ'օնց էր 4 բաժանման մէջ, յօգուտ է. Վ. Պետրօվիկոն, թատրոնական օրէկտորն է հայ սիրողների խմբի մասնակցութեամբ: Կը ներկայացրի «Որ տրակիս պէտք է պատկոխաւ», Մօլիերից թարգմանած պիէսան:

Մինք ստացանք Սիմֆէրօպօլից մի յօդված ուսուցիչի լեզու և ծրարի մէջն էլ 5 թուրք Բօզկադի հեղինակը ինզորում է մեզ թարգմանել իր յօդվածը հայերէն լեզուով և սպել «Մշակի» մէջ: Իսկ հինգ թուրքն էլ ուղարկում է որպէս տարկան վճար «Մշակի» համար,—բայց եթէ չենք սպի նրա յօդվածը, պ. հեղինակը ինզորում է վերադարձնել իրան 5 թուրքն էլ:... Ուրնին պարտը կը ստանայ «Մշակը» միայն իր յօդվածի համար և ոչ թէ առհասարակ մեր լրագրի մէջ սպված նիթերի համար: Այդ տեսակ անձանքի, բնամիտ պայմաններ մի լրագրին կարելի է միայն պատահել հայոց հասարակութեան մէջ:... Այդ տեսակ պայմաններին մենք համաձայնվել չենք կարող և յետ երբ դարձնում յօդվածն էլ, 5 թուրքն էլ:... Պարտը չէ մտածում որքան անբարեբաղութիւն և կոպտ է առհասարակ այդ տեսակ առաջադիմութիւնը և բացի սորանից ստիպում է մեզ իր յօդվածն ու հինգ թուրքը վերադարձնելով՝ փոստի ծախսն էլ վճարել:...

ԱՆԴՐՎՈՎԿԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԴՐՊՐՈՑ ԵՆ ԾՆՆԴԱՆՈՑ, ՎՆԴՅԻՆ ՎԵՐԱ: ԾՆՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՐՎԱՅ և զԻՉԵՐՎԱՅ ամենայն ժամանակ: Ծննդականներ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ПРОДАЮТСЯ ДРОЖКИ. СОЛО-ЛАКИ. СТАРЫЙ Д. ПИТОНОВА. ԾԱԽՎՈՒՄ Է ԴՐՈՇԿԱՆ, ՍՈԼՈ-ԼԱԿՈՒՄ, պ. ֆիլոսոֆի Կին ամառը: 3 (3)

ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻ Գայրէժ քաղաքի Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը հրատարակում է մի վարձապէս նոյն դպրոցում դասատուութեան համար ուսաց լեզուից, թուարանութիւնից և աշխարհագրութիւնից: Հարձական կուսինայ 20 դաս, իւրաքանչեւ 1 1/2 ժամ, ամեն մէկ առարկայից դասեր թիւր կորոչէ դպրոցի տեսութիւնը: Բոճկի և պայմանների մասին դիմել Մշակի խմբագրատունը, կամ Հայրենիք թարգմանարարում պ. Ա. Մեթեր-Ազարեանցի կանտորը:

Թիֆլիսից գրում գանուող ցանկացողները կարող են թղթակցութիւն ունենալ ուղղակի դպրոցի Հոգաբարձութեան հետ Գայրէժ քաղաքում և իրանց պայմանները առաւ շարկել: 4 (5)

Համար հիւանդանոցում, բացի հասարակաց դահլիճներից, որտեղ ծննդականները ապրուստի և բժշկութեան համար վճարում են 50 կոպէկ օրը, իսկ չքաւորները ճրիպպէս են պահպանւում և բժշկուում,—կան նաև առանձին գաղանի սենականեր, 30 մինչև 50 թուրք ամսական վճարով:

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, կարհրլի և դեղի համար 30 կոպէկ վճարով: Աղքատները ճրիպպէս:

Ամեն օր, 8 ժամից մինչև 9 1/2 առաւօտան, —գոկտօր Արտեմիէլ, 9 1/2 ժամից մինչև 11 ժամ առաւօտան, —գոկտօր Անանոյ:

Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11 ժամից առաւօտան մինչև 12 ժամ,—գոկտօր Ալեանու և դոկտօր Կապուկէլ:

Չորեքշաբթի օրերը, 12 ժամից կէսօրի կուսուլացիա դոկտօրների Բէմեքա, Ալեանու, Անանոյ և Արտեմիէլ:

ՄԱՆԿԱՍՏԱՆԻ ԳԱՅՐԵՋ քաղաքի Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը հրատարակում է մի վարձապէս նոյն դպրոցում դասատուութեան համար ուսաց լեզուից, թուարանութիւնից և աշխարհագրութիւնից: Հարձական կուսինայ 20 դաս, իւրաքանչեւ 1 1/2 ժամ, ամեն մէկ առարկայից դասեր թիւր կորոչէ դպրոցի տեսութիւնը: Բոճկի և պայմանների մասին դիմել Մշակի խմբագրատունը, կամ Հայրենիք թարգմանարարում պ. Ա. Մեթեր-Ազարեանցի կանտորը:

Թիֆլիսից գրում գանուող ցանկացողները կարող են թղթակցութիւն ունենալ ուղղակի դպրոցի Հոգաբարձութեան հետ Գայրէժ քաղաքում և իրանց պայմանները առաւ շարկել: 4 (5)

Գորա եկաւ մամուլի տակից ոտանաւորով գրած փոքրիկ գրքիկ այս վերնագրով: «Համառոտ Սօփերը Հայրենեաց գործերի վրա», աշխատարութիւն Մարգիս վարձապետ ֆիլոսոֆիայի նոր-Բայազդցու: Գինն է 30 կօպ, գումարով առնողներին զեղուին կը լինի: Կը վաճառվի պ. պ. Կնիթիանցի և վարդանանցի զբայվածատանոցներում:

Գանկացողները կարող են դիմել և Հեղինակին այս հասցով: В г. Новобаязетъ. Саркису Фидюянцу.

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՆ ՄԻՋՈՑ
ՓՈՌԵ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽՈՒՐԿՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՁՍՏՆԵՆՈՒ ԻՐՍ ԳՈՒՏՄԱՆ ԴԻՄԻԳՈՍ ՊԵՇԵՏԵ

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՏԱՆ և ՀԱՅՌԱՅՑՈՒՅՑ

Որ մի քանի արտասանմանն պա... լատերից արտանութիւններ ունի:

Պատիւ ունիմ առաջադրել թէ հասարակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանց հնարած ամենայն և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ միշտի, խուրդերի և ամեն տեսակ միջանոցներ, ինչպէս օրինակ սև ուստի (տարակա) ցից, միջուկ, բաղլիճ, լու և այլն, սննդանեւ համար: Յիշակ միջոցները, որք իմ գիտելն են և ինձանց պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեւ վիպակները:

Այդ միջոցները արժանապատե Կոնկալի լազարփետեան հանդիտում 1872 թին մեծ արձաթիսայ մեդալի և Վիեննայի աշխարհահանդիտում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐԱՂԸ ԵՐԱՇԽԱՌԸ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի. ԳՆԵՐԸ՝

Մի երկ և խուրդերի զէմ դեղը մի սրտակի համար 1 ր. 50 կօպ: Փային սև ուստիներից, ցիցի միջոցների և լուերի զէմ 1 րոթը: Սորա հետ հարկուոր է առնել և գուտապէրի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւր 60 կօպ:

Հեղուկ բաղլիճները զէմ մի սրտակ 1 ր.:

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծի չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաջխաւոր է դիտուոր Գէպօ:

Հատուտ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաշու կղաղութիւնների զէմ, մի սրտակ 60 կօպ:

Գիտաւոր զէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼՍԵՎՈՒՄ մոզկալային մազաղնում, Գլոցգովի փողոցում, Արձրուտ տանը: ՎՍՄԻՎԿԿԿԿՍՈՒՄ պ. ՍԵՎԱՆԻ մօտ, իսկ ՍՏՈՎՐԱՊՈՒՄ պ. ԿՈՒՐԻՒՆՉԵՆԿՈՒՄ մօտ:

Օտարաբարաբացիները թող բարեհասկն ճանապարհի ծախսը վճարել յիշակ միջոցները ուղարկու համար: Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով: 21 (50)